Հայաստանում պատվերների հանձնման կետի ձևավորման ուղեցույց

պարզեցված պայմաններ՝
մինչև 5000 բնակիչ ունեցող
բնակավայրերի համար

wildberries

Բովանդակություն

Փաստաթղթի մասին

Ինչպես բացել ՊՀԿ 03
Բացման պայմաններ 04
Տարածք 05
Բազային հավաքածու՝ մուտքային խումբ 06
Բազային հավաքածու՝ սարքավորում և կահույք 07
Բազային հավաքածու՝ բրենդավորում 08
Բազային հավաքածու՝ տեղեկատվական նյութեր 09

Մուտքային խումբ

Ի՞նչ է ներառվում մուտքային խմբում 11
Կրոնշտեյն վահանակ 12
Որտեղ տեղադրել կրոնշտեյն վահանակը 13
Աշխատանքային գրաֆիկի վերաբերյալ տեղեկություններով ցուցանակ կամ պիտակ 14
Դռան ցուցանակներ 15
Որտեղ տեղադրել աշխատանքային գրաֆիկի վերաբերյալ տեղեկությունը և ցուցանակները 16
Ինչպես տեղադրել ցուցանակը 17

Սարքավորում և կահույք

Տեխնիկա 20
Տեսահսկման համակարգ 21
Ինչպես տեղադրել տեսախցիկները 22
Պատվերների հանձնման սեղան 23
Հանդերձարան 24

Բրենդավորում

Պաստառ 26
Որտեղ տեղադրել պլակատը 27
Թեյբլ-թենթ 28
Որտեղ տեղադրել թեյբլ-թենթը 29

Տեղեկատվական նյութեր

Տեղեկատվություն տեսահսկման վերաբերյալ 31
Հաճախորդի անկյուն 33

Ինչպես բացել ՊՀԿ

01

Ընտրել վայրը և համաձայնեցնել տարածքը

02

Պատվիրել տեխնիկան, կահույքը և բրենդավորումը

03

Տեղադրել տեսամոնիթորինգի խցիկը

04

Դնել սեղանը և հանդերձարանը

05

Ձևավորել հանձնման կետը ներսից

06

Ձևավորել մուտքային խումբը

07

WB ՊՀԿ-ում ուղարկել հանձնման կետի ակտիվացման հայտը

08

Սպասել հայտի հաստատմանը

Բացման պայմաններ

01	Տեղադիրք	Գյուղերում, ավաններում և այլ բնակավայրերում, որտեղ բնակչությունը 5000-ից պակաս է
02	Տարածք	Ցանկացած ոչ բնակելի տարբերակ հարմար է, անգամ մթերային խանութը: Կարևոր է, որ ՊՀԿ-ին հատկացված տարածքի նվազագույն մակերեսը 10 մ^2-ից պակաս չլինի: Նախընտրելի են առանց ավելորդ գովազդի ճակատ ունեցող շենքերը
03	Վերանորոգում	Անհրաժեշտ չէ
04	Բրենդավորում	Հաճախորդների գոտու համար պլակատը և թեյբլ-թենթը, ինչպես նաև արտաքին կրոնշտեյն վահանակը կուղարկենք անվճար

Ի՞նչ տարածք ընտրել

Լավ տարբերակ



Առանձին ոչ բնակելի շենքում



Մշակութային և մարզական կենտրոններում, կենցաղի տներում և այլ հասարակական շենքերում



Կոմերցիոն՝ բնակելի շենքի 1-ին հարկում

Որտեղ խորհուրդ չի տրվում ՊՀԿ բացել



Վատ վիճակում գտնվող ճակատ ունեցող շենքում



Ավտոտնակում




Անվադողերի վերանորոգման արհեստանոցի կամ ալկոհոլային խմիչքի խանութի մոտ

Բազային հավաքածու՝ մուտքային խումբ

Անվճար կուղարկենք կրոնշտեյն վահանակը՝ ակտիվացման ձեր հայտը հաստատվելուց հետո:


Պարզեցված պայմաններով ՊՀԿ բացելու համար ցուցանակն ամրացնել դեռևս պետք չէ



Կրոնշտեյն վահանակ



Աշխատանքային գրաֆիկի վերաբերյալ տեղեկություններով ցուցանակ կամ պիտակ



Ուղղությունը ցույց տվող ցուցանակ՝ դռների համար

Բազային հավաքածու՝ սարքավորում և կահույք



Սմարթֆոն



Հանձնման սեղան. պատվիրեք ֆիրմային տարբերակը կամ օգտագործեք ձերը



Տեսամոնիթորինգի խցիկ կամ 2 տեսախցիկ, եթե պահեստն առանձին տարածքում է




Հանդերձարան

Բազային հավաքածու՝ բրենդավորում

Անվճար կուղարկենք պլակատը՝ ակտիվացման ձեր հայտը հաստատվելուց հետո, իսկ թեյբլ-թենթը կարող եք պատվիրել Wildberries-ում



Պլակատ A1




Թեյբլ-թենթ A5

Բազային հավաքածու՝ տեղեկատվական նյութեր

Ձևավորեք սպառողի անկյունը և տեղադրեք անհրաժեշտ տեղեկատվական նյութերը՝

— կազմակերպության մասին տեղեկությունները
— հանձնման կետում վարքագծի կանոնները
— տեղեկատվություն տեսահսկման վերաբերյալ



Հաճախորդի անկյուն



Տեղեկատվություն տեսահսկման վերաբերյալ

Մուտքային խումբ


հանձնման կետը դարձնում ենք գրավիչ և աչքի ընկնող

01 Կրոնշտեյն վահանակ
02 Աշխատանքի գրաֆիկ և դռան վրա փակցվող պիտակներ

Ի՞նչ է ներառում մուտքային խումբը

1. Կրոնշտեյն վահանակ
2. Աշխատանքի գրաֆիկով ցուցանակը
3. Պիտակ «Դեպի դուրս» կամ «Դեպի ներս»

Մեզ մոտ գործում են ձևավորվման միասնական չափանիշներ. խնդրում ենք պահպանել կորպորատիվ ոճը, հետևել հայեցակարգի դրույթներին և տեխնիկական բնութագրերին



Կրոնշտեյն վահանակ

Այն բրենդինգի պարտադիր տարրերից է: Կրոնշտեյն վահանակը կօգնի հանձնման կետը դարձնել ավելի նկատելի բոլոր կողմերից




Վահանակի չափսը՝ 50×50 սմ

Որտեղ տեղադրել կրոնշտեյն վահանակը

Կրոնշտեյն վահանակի, ինչպես և ցուցանակի, կենտրոնական առանցքը, պետք է լինի ծածկի գծին զուգահեռ* կամ ավելի

ցած Եթե ճակատին առկա են այլ կրոնշտեյններ կամ ցուցանակներ, ձեր կրոնշտեյնը տեղադրեք մյուսների մակարդակին:

Կրոնշտեյն վահանակը տեղադրվում է ՊՀԿ զբաղեցրած տարածքի սահմաններում



*ծածկն անցնում է
1-ին և 2-րդ հարկերի միջև

Աշխատանքային գրաֆիկի վերաբերյալ տեղեկություններով ցուցանակ կամ պիտակ

Պիտակը հարմար է ապակե դռան համար, իսկ այլ մակերեսների դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել ցուցանակ:

Եթե որոշել եք պիտակ օգտագործել, տպեք այն տպարանում: Տպեք գունավոր՝ Oracal սպիտակ վինիլային թաղանթի վրա:

Եթե որոշել եք ցուցանակ օգտագործել, ամենահարմարը կլինի դրա վրա ՈւՄ տպագրությամբ թափանցիկ պիտակ փակցնել: Եթե աշխատանքային գրաֆիկը փոխվի, բավական կլինի թարմացնել պիտակը:

Ցուցանակը պետք է տեղադրվի կամ պիտակը պետք է փակցվի նախքան ՊՀԿ ակտիվացումը

Չափսը՝ 40×40 սմ

[ներբեռնել նմուշը]



Աշխատանքային գրաֆիկ

Դռան ցուցանակներ






Չափսը՝ 10×5 սմ

Ցուցանակները պատվիրեք տպագրությունում: Տպեք գունավոր՝ 0,15 սմ պոլիէթիլենտերեֆտալատի (ՊԷՏ) վրա:


ներբեռնել նմուշը

Որտեղ տեղադրել աշխատանքային գրաֆիկը և «Դեպի դուրս» և «Դեպի ձեզ» ցուցանակները




Դռան ձախ կողմում՝ աչքերի մակարդակում, հատակից 165 սմ բարձրության վրա:

Դռան բացվածքից 20 սմ հեռավորություն թողեք



Եթե դռնից մինչև պատուհան հեռավորությունը 50 սմ-ից ավելի է և 80 սմ-ից պակաս, ցուցանակը տեղադրեք հենց դրանց ճիշտ մեջտեղում:


Եթե 50 սմ-ից պակաս է, ապա՝ դռան աջ կողմում



Դռան աջ կողմում՝ աչքերի մակարդակում, հատակից 165 սմ բարձրության վրա:


Դռան բացվածքից 20 սմ հեռավորություն թողեք

Ինչպես տեղադրել ցուցանակը հեղուկ մեխերով կամ շինարարական սոսնձով



1. Սոսինձը քսեք ցուցանակի հետևի կողմի պարագծով
2. Հպեք ցուցանակը պատին և անմիջապես պոկեք այն մակերեսից:
3. Սպասեք 3-5 րոպե՝ այս կերպ սոսինձը լավ կպնդանա
4. Ցուցանակը կրկին հպեք պատին և ամուր սեղմեք
5. Ցուցանակի դիմային կողմից հանեք պաշտպանիչ թաղանթը

Ինչպես տեղադրել ցուցանակը երկկողմանի ակրիլային կպչուն ժապավենով



Միայն հարթ մակերեսի՝ ապակե կամ ալյումինե կոմպոզիտային վահանակի համար

1. Ցուցանակի հետևի կողմում փակցրեք երկկողմանի կպչուն ժապավեն
2. Հեռացրեք պաշտպանիչ թաղանթը կպչուն ժապավենի արտաքին կողմից
3. Ցուցանակը ամուր սեղմեք մակերեսին
4. Ցուցանակի դիմային կողմից հանեք պաշտպանիչ թաղանթը

Սարքավորում և կահույք

01 Տեխնիկա
02 Հսկման տեսախցիկներ
03 Հանձնման սեղան
04 Հանդերձարաններ


Տեխնիկա

Ապրանքներ ընդունելու, պատվերներ հանձնելու և վերադարձը ձևակերպելու համար ձեզ անհրաժեշտ է միայն սմարթֆոն:

Բացի այդ, կարող եք ձեռք բերել նոութբուք կամ պլանշետ և շտրիխ կոդի սկաներ:



Բազային սարք՝ սմարթֆոն





Լրացուցիչ սարքեր՝ նոութբուք և սկաներ

Տեսահսկման համակարգ

Յուրաքանչյուր հանձնման կետում պետք է տեղադրվեն տեսամոնիթորինգի խցիկներ: Դրանք նպաստում են հասարակական կարգի պահպանմանը:

Կարևոր է, որ տեսախցիկը ֆիքսի ապրանքի հետ կատարվող բոլոր գործողությունները՝ ինչպես է մենեջերը ստանում տուփերը և տեղադրում ապրանքները պահեստում, ինչպես է պատվերը հանձնվում գնորդին, ինչպես է գնորդը բացում և ստուգում ապրանքը, ինչպես է մենեջերը ձևակերպում մերժումը, վերադարձը, պատրաստում ապրանքը վերադարձի համար կամ ուղարկում ապրանքն ուտիլացման:

Խնդրում ենք աշխատակցին ծանոթացնել տեսալսա- և լսամոնիթորինգի ընթացակարգի վերաբերյալ քաղաքականությանը՝ ստորագրությամբ հաստատումով






Ինչպես տեղադրել տեսախցիկները

Թաքցրեք էլեկտրական լարերը կամ օգտագործեք մալուխային կանալ, որպեսզի լարերը տեսանելի չլինեն: Տեսախցիկը պտուտակեք առաստաղին, պատին կամ տեղադրեք կրոնշտեյնի վրա:

Արգելվում է տեսամոնիթորինգի խցիկներ տեղադրել անմիջապես զուգարանում



Առաստաղին

Մի՛ տեղադրեք տեսախցիկը ցուցապաստառի կամ հանդերձարանի վերևում



Կրոնշտեյնի վրա




Պատին

Պատվերների հանձնման սեղան

Մենք մշակել ենք տուփերի չափսերին համապատասխան հատուկ սեղան: Պատրաստեք այն ըստ գծագրերի, պատվիրեք նմանատիպ մեկը կամ օգտագործեք այն, որն արդեն իսկ կա ձեր տարածքում: Կարևորը՝ պատվերներ հանձնելը լինի հարմար և անվտանգ

Լայնությունը՝ 96 սմ
Բարձրությունը՝ 70 սմ
Երկարությունը՝ 105 սմ

ներբեռնել գծագրերը



Հանդերձարան

Տեղադրեք առնվազն 1 հանդերձարան և լրացրեք այն հաստ գործվածքից պատրաստված վարագույրով: 175 սմ երկարությամբ վարագույրի համար տեղադրեք շրջանակ հատակից 200 սմ բարձրության վրա:

Հայելու, գորգի, հագուստի կեռիկների և կոշիկի թիի առկայությունը հանդերձարանն առավել հարմար կդարձնի հաճախորդների համար




Հանդերձարան



Կեռիկներ



Թի



Գորգ

Բրենդավորում

01 Պլակատ
02 Թեյբլ-թենթ

Պաստառ

A1 ձևաչափով պլակատ՝
ֆիրմային գունավորմամբ նախշով
և Wildberries տարբերանշանով:

Անվճար կուղարկենք պլակատը՝
բացման ձեր հայտը
հաստատվելուց հետո:

Կարող եք տպագրությունում
պատվիրել լրացուցիչ
պլակատներ՝ օգտվելով ստորև
հասանելի նմուշից

Բարձրությունը՝ 84,1 սմ
Լայնությունը՝ 59,4 սմ




ներբեռնել նմուշը

Որտեղ տեղադրել պլակատը

Պատվերների հանձնման սեղանի համեմատ՝ կենտրոնով:

Պլակատն ամրացրեք պատին՝ հատակից 210 սմ բարձրության վրա:

Պաստառը ամրացվում է Velcro-ով. պարզապես հեռացրեք պաշտպանիչ հենակը և ամուր սեղմեք ժապավենը պատին



Թեյբլ-թենթ

Սա A5 ձևաչափով ներդիր ունեցող պլաստիկե հենակ է:

Թեյբլ-թենթը գնորդների համար կարևոր տեղեկությունների համար է:

Հենակը երկկողմանի թափանցիկ է և թույլ է տալիս տեղադրել միանգամից 2 թերթոն:




Բարձրությունը՝ 20 սմ
Լայնությունը՝ 15 սմ

ներբեռնել նմուշը

Որտեղ տեղադրել թեյբլ-թենթը

Մենեջերի սեղանի ձախ կողմում՝ որպեսզի հաճախորդները չբաց թողնեն կարևոր տեղեկությունները





Տեղեկատվական նյութեր

01 Տեղեկատվություն տեսահսկման վերաբերյալ
02 Սպառողի անկյուն

Տեղեկատվություն տեսահսկման վերաբերյալ

Հանձնման կետում տեսա- և լսամոնիթորինգ իրականացնելու համար անհրաժեշտ է.

— տեղադրել այդ մասին տեղեկացնող ցուցանակ, որում պետք է նշվի, որ ՊՀԿ-ում գործում են տեսախցիկներ

— Բացի այդ, գնորդներին պետք է հասանելի դարձնել տվյալների մշակման քաղաքականության տեքստը

Չափս՝ 14,8×21 սմ

Նյութեր՝ թուղթ

[ներբեռնել նմուշը]





Ինչպես ենք խորհուրդ տալիս աշխատել մակետների և ձևանմուշների հետ՝

1. Ներբեռնեք նյութերը՝ ցուցանակի մակետը և «Տեսա- և աուդիոմոնիթորինգի իրականացման կարգի քաղաքականություն» փաստաթղթի ձևանմուշը

2. Ինքնուրույն լրացրեք դատարկ դաշտերը ձեզ համար ակտուալ տեղեկատվությամբ

3. Կարող եք քաղաքականությունը տեղադրել ստացման կետի տարածքում, ինչպես նաև ամպային պահեստում. այդ դեպքում ցուցանակի վրա խորհուրդ է տրվում ունենալ QR կոդ

Ամպային պահեստում քաղաքականությունը տեղադրելու դեպքում.

1. ավելացրեք քաղաքականության տեքստը ամպային պահեստում

2. բացեք ֆայլի հասանելիությունը հղումով և պատճենեք այն

3. ստեղծեք QR կոդ այս հղման համար: օգտագործեք ցանկացած անվճար ծառայություն

4. Ներբեռնեք QR կոդը և ավելացրեք այն ցուցանակի մակետին՝ ինչպես օրինակում


5. Տպեք ցուցանակի մակետը և տեղադրեք այն սեղանի ցուցանակում

Հաճախորդի անկյուն

Այս ստենդը պարտադիր պետք է տեղադրված լինի հանձնման կետում: Այն նախատեսված է իրավական տեղեկատվության և ՊՀԿ-ից օգտվելու կանոնների ներկայացման համար:

Պատվիրեք սպառողի անկյուն՝ ձեռնարկում հասանելի նմուշներով, կամ ընտրեք նմանատիպ պատրաստի տարբերակ:

Փակցրեք այն ապրանքների ստուգման սեղանի կողքի կամ որևէ այլ պատի վրա



[ներբեռնել նյութերը]

Ամեն ինչ կստացվի՛

երբ հանձնման կետը ձևավորեք,
WB ՊՀԿ-ում ուղարկեք ակտիվացման
հայտը

wildberries